ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյանի մոտ 2018 թվականի հուլիսի 9-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ ***Գ. Գաբրիելյանի***
Կ.Գրիգորյանի
Ա.Ղուկասյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավարի
ժամանակավոր պաշտոնակատար ***Ա.Հովհաննիսյանի***

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների
ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնականների

Օրակարգում

1. ***ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկում:***

/ՀՀ Արմավիրի մարզպետ – Գ.Միրիջանյան/

ՀՀ Արմավիրի մարզպետ Գ.Միրիջանյանը մինչև օրակարգային հարցերի քննարկումը խորհրդակցության մասնակիցներին ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Ալեքսանդր Ղուկասյանին:Այնուհետև մարզպետն անդրադարձավ ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկմանը:

Քննարկվեցին՝

Հարց 1. ՀՀ Արմավիրի մարզի դպրոցներում իրականացվելիք միջոցառումների և մոնիտորիգ անցկացնելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին՝ և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Բուդաղյանին՝

ա/ՀՀ Արմավիրի մարզի դպրոցներում առաջիկայում անցկացվելիք մոնիտորինգի աշխատանքներին հասարակական կազմակերպություններից և քաղաքացիական աշխատանք իրականացնող անձանցից մասնակից դարձնելու նպատակով համապատասխան ընթացակարգով ներկայացնել թեկնածուներ.

բ/պատրաստել գրություն ՀՀ Արմավիրի մարզի ՊՈԱԿ–ների ղեկավարներին քառօրյա պատերազմի ընթացքում զոհված ազատամարտիկների անվամբ մարզի դպրոցները վերանվանելու մասին:
/**Ժամկետ 16. 07.2018թ**/

Հարց 2.ՀՀ Արմավիրի մարզի և Իտալիայի Հանրապետության Վենետո նահանգի հետ համագործակցության մասին:
Հանձնարարական՝
ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի զարգացման, ծրագրի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Լ.Մուշեղյանին՝
պատրաստել գրություն ուղղված Իտալիայի Հանրապետության Վենետոյի նահանգապետին ՀՀ Արմավիրի մարզի և Իտալիայի հանրապետության Վենետո նահանգի միջև բարեկամության և համագործակցության կապերը շարունակելու վերաբերյալ:
/Ժամկետ 16.07.2018թ/

Հարց3
ՀՀ Արմավիրի մարզպետին կից խորհուրդներ ստեղծելու մասին:
Հանձնարարական՝
ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Հովհաննիսյանին, ՝
պատրաստել մարզպետին կից խորհուրդների ստեղծման որոշման նախագիծը և զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետին:
(Ժամկետ 16.07.2018թ)

Հարց 4 ՀՀ Արմավիրի մարզի առողջապահության ոլորտի գլխավոր մասնագետների խմբի ստեղծման վերաբերյալ
Հանձնարարական՝
ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Ա.Ղուկասյանին, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Հովհաննիսյանին, իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Լ.Հարությունյանին՝
ուսումնասիրել և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզի առողջապահութան ոլորտում գլխավոր մասնագետների խումբ ստեղծելու մասին որոշման նախագիծ և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:
(Ժամկետ 16. 07.2018թ):

Հարց 5 Երևան քաղաքում ՀՀ Արմավիրի մարզի գյուղատնտեսական մթերքների շուկա կազմակերպելու վերաբերյալ:
Հանձնարարական
ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանին և իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Լ.Հարությունյանին՝
ուսումնասիրել Երևան քաղաքում գյուղատնտեսական մթերքների շուկայի հետ համաձայնագիր կնքելու իրավական հնարավորությունը և ներկայացնել առաջարկություն ՀՀ Արմավիրի մարզպետին:
/**Ժամկետ 16. 07.2018թ**/

Օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման ավարտմամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Գ.Միրիջանյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝

17.07.2018

X

VERIFIED OCSP 17.07.2018 12:18:28 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Արձ.՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ Մ.Առուշանյան